ԵՐԿԻՆՔԸ. ՏԵՍԱ... ԼՍԵՑԻ... ՈՎՔԵՐ ԷԻՆ ԵՐԿՆՔՈՒՄ

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐՆԵՐ. ԺՈՂ. 3.11

11 Նա ամեն բան արել է վայելուչ իր ժամանակին, նաև հավիտենականությունը դրել է մարդկանց սրտում. Բայց մարդը չի կարող սկզբից մինչև վերջը հասկանալ Աստծու արած գործերը:

Հովհաննեսն ասում է՝ ես ՏԵՍԱ երկինքը, ես ԼՍԵՑԻ երկինքը, և ես ՏԵՍԱ, թե ՈՎՔԵՐ էին երկնքում:

Եբրայեցիներին 8.5 – Ովքեր իրենց ծառայությունն են մատուցում երկնային բաների <u>օրինակով ու շուքով</u>, ինչպես որ Մովսեսին հրաման տվեց, երբ նա խորանը պիտի կառուցեր. Տե՛ս,- ասում է, - որ ամեն բան անես ըստ այն օրինակի, որ քեզ լեռան վրա ցույց տրվեց»:

- *Ուշադրություն դարձրեք՝ Աստված Մովսեսին չասաց՝ ստեղծիր մի բան քո երևակայությամբ: Նա ասաց՝ կառուցիր ըստ այն օրինակի, որ քեզ ցույց տրվեց:*
- ***Հովհաննեսը երկնքի մասին ենթադրություններ չէր անում. նա ասում էր՝ «ՏԵՍԱ»:***

  «Տեսա մի դուռ՝ բացված երկնքում»:

  «Տեսա գահի վրա Նստողին և Նրա ձեռքի գիրքը»:

  «Տեսա Գառին՝ գահի կենտրոնում»:

  «Տեսա մի մեծ բազմություն՝ գահի և Գառան առաջ»:

«Տեսա երկնքում բացվում է վկայության խորանի տաճարը»:

«Տեսա երկինքը բացվածե և սպիտակ ձին»:

«Տեսա մեծ սպիտակ գահը»:

«Տեսա նոր երկինք և նոր երկիր»:

«Տեսա Նոր Երուսաղեմը՝ երկնքից իջնելիս»:

- *Երկինքը Հովհաննեսի, Պողոսի և Առաքյալների համար գաղափար չէր. այն իրականություն էր, որը Աստված թույլ տվեց նրան տեսնել:*

- *Այսինքն՝ երկրային խորանը պարզապես մի կառույց չէր: Այն երկնային իրականության օրինակն ու շուքն էր:*

Եվ եթե այսօր մարդկանց հարցնեք.

Ինչպիսի՞ն է դրախտը:

Արդյո՞ք մենք կճանաչենք իրար:

Ի՞նչ ենք անելու այնտեղ:

Բայց երբ բացում ենք Աստվածաշունչը, բոլորովին այլ պատկեր ենք տեսնում:

Աստվածաշունչը երկինքը ներկայացնում է որպես իրական, կենդանի, գեղեցիկ և գործուն աշխարհ: Եվ գուցե հենց դրա համար է մարդու ներսում միշտ եղել այդ անբացատրելի ձգտումը դեպի մի ուրիշ՝ ավելի կատարյալ աշխարհ:

Ինչպես Ժողովող 3.11-ն է ասում՝

«Նա նաև հավիտենականությունը դրել է մարդկանց սրտում»:

1 Թես. 4.12-13 - 12 Ձենք կամենում, եղբայրնե՛ր, ու տրտմեք, ինչպես ուրիշները, որ հույս չունեն: 13 Որովհետեւ <u>եթէ հավատում ենք</u>, որ Հիսուսը մեռավ եւ հարություն առավ, այնպէս էլ Աստուած ննջեցեալներին Հիսուսի ձեռով <u>կբերի</u> նորա հետ:

I. ՀՈՎՀԱՆՆԵՍԸ ՏԵՍԱՎ – ԵՐԿԻՆՔԸ ԱՍՏԾՈ ՍԿԶԲՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ Է

Հայտնություն 21.1-2 – «Տեսա նոր երկինք և նոր երկիր... Տեսա սուրբ քաղաքը՝ Նոր Երուսաղեմը...»

- *Այն, ինչ Աստված սկսեց Ծննդոցում, Հովհաննեսը տեսնում է կատարված Հայտնության մեջ:*

  Ծննդոցում՝ պարտեզ:

  Հայտնության մեջ՝ քաղաք և պարտեզ:

  Ծննդոցում՝ կենաց ծառ:

  Հայտնության մեջ՝ կրկին կենաց ծառ:

  Ծննդոցում՝ Աստված մարդու հետ:

  Հայտնության մեջ՝ Աստված հավիտյան մարդու հետ:

- *Մեղքը խաթարեց այդ աշխարհը: Բայց հետաքրքիրն այն է, որ Աստված երբեք չփոխեց Իր նպատակը:*

Հովհաննեսը տեսավ Աստծո սկզբնական ծրագրի վերջնական իրականացումը:

Հայ. 22.1-2 - 1 Եւ ցոյց տվեց ինձ մի մաքուր գետ, կենդանի ջրի ակնվանու նման փայլուն, որ դուրս էր գալիս Աստուծո եւ Գառի աթոռից: 2 Եվ նրա հրապարակի մեջտեղում՝ գետի այս ու այն կողմերում, կենաց ծառն էր, որ տասներկու պտուղ էր տալիս. ամեն ամիս իր պտուղն էր տալիս, իսկ ծառի տերևները ազգերին բժշկելու համար էին:

«Այլևս մահ չի լինի, ո՛չ սուգ, ո՛չ աղաղակ, ո՛չ ցավ» (Հայտնություն 21.4):

Լավագույն հարցը սա է. «Ո՞վ է ուտելու Կենաց ծառի պտուղներից»:

1. Քո հավատքը հաղթում է աշխարհին

Հայ. 2.7 - 7 Ով ականջ ունի, թող լսի, ինչ որ Հոգին ասում է եկեղեցիներին. Հաղթողին թույլ կտամ ուտել կենաց ծառից, որ Աստծու դրախտի մէջ է:

որովհետև ամեն ոք, ով Աստծուց է ծնված, հաղթում է աշխարհին: Սա՛ է այն հաղթությունը, որ աշխարհին հաղթեց, այսինքն՝ մեր հավատը: Եվ ո՞վ է, որ աշխարհին հաղթում է, եթե ոչ նա, ով հավատում է, որ Հիսուսն Աստծու Որդին է (Ա Հովհ. 5.4-5)

2. ***Քո սերը վկայում է, որ դու պատկանում ես Աստծու ընտանիքին:***

Ամեն ոք, ով հավատում է, որ Հիսուսն է Քրիստոսը, Աստծուց է ծնված, և ամեն ոք, ով սիրում է ծնունդ տվողին, նրանից ծնվածին էլ է սիրում: Նրանով ենք ճանաչում, որ սիրում ենք Աստծու զավակներին, երբ սիրում ենք Աստծուն և նրա պատվիրանները պահում: (Ա Հովհ. 5.1-5)

II. ՀՈՎՀԱՆՆԵՍԸ ԼՍԵՑ – ԵՐԿԻՆՔԸ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ և ԵՐԿՐՊԱԳՈՒԹՅԱՆ ՎԱՅՐ Է

- ***Եվ ի՞նչ լսեց:***

Հայտնություն 5.11 – «Տեսա և լսեցի բազմաթիվ հրեշտակների ձայնը...»

Հայտնություն 14.2 – «Երկնքից մի ձայն լսեցի... քնարահարների ձայնի պես...»

Հայտնություն 19.1 – «...լսեցի երկնքում մեծ բազմության բարձր ձայնի պես մի ձայն... Ալելուիա»:

Հովհաննեսը ոչ միայն տեսավ երկինքը. նա լսեց երկինքը:

- ***Պողոսը լսեց բաներ, որ մարդկային լեզուն չի կարող նկարագրել:***

2 Կոր. 12.3-4 - 3 Գիտեմ նաև այնպիսի մարդու, չգիտեմ՝ մարմնով, թե առանց մարմնի, Աստված գիտի. 4 Որ

հափշտակվեց դրախտի մեջ ու անպատմելի բաներ լսեց, որ մարդը չպետք է խոսի դրանց մասին:

Եթե ցանկանում ես իմանալ, թե ինչ է հնչում երկնքում, երգիր Հովհաննեսի լսածը:

Փրկությունը մեր Աստծունն է,
Որ գահին է բազմել,
Օրհնությունը Գառնուկինն է,
Որ գահին է բազմել:

Ամեն օրհնություն, փառք, իմաստություն,
Գոհություն և պատիվ, զորություն, կարողություն՝
Մեր Աստծուն, մեր Աստծուն
Հավիտյանս հավիտենից, Ամեն:

Երկինքը լի է գովաբանության ձայներով:

- *Հիշե՛ք, թե ինչպես է երկինքը տոնում մեկ մարդու փրկության համար:*

  Ղուկ. 15.25 – ...եւ երբոր եկավ տանը մոտեցավ, երգերի և պար գալու ձայնը լսեց:

  Ա Կոր. 2.9 – այլ ինչպես գրված է. Ինչ որ աչքը չտեսավ, ու ականջը չլսեց, և մարդու սիրտը չընկավ, այն Աստված պատրաստեց իրեն սիրողների համար (Ես. 64.4):

  10 Բայց Աստված մեզ իր Հոգու միջոցով հայտնեց...

Ա Կոր. 13.12 – Այժմ, երբ նայում ենք հայելու մեջ, հստակ չենք տեսնում, իսկ այն ժամանակ կտեսնենք դեմառդեմ: Այժմ մասամբ եմ տեղյակ, իսկ այն ժամանակ կճանաչեմ այնպես, ինչպես որ նրանից ճանաչվեցի:

III.ՀՈՎՀԱՆՆԵՍԸ ՏԵՍԱՎ ՄԱՐԴԿԱՆՑ – ԵՐԿԻՆՔԸ ՓՐԿՎԱԾՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՄԱՆ ՎԱՅՐ Է

Հայտնություն 7.9 – «Դրանից հետո տեսա, և ահա մի մեծ բազմություն, որին ոչ ոք չէր կարող հաշվել՝ բոլոր ազգերից, ցեղերից, ժողովուրդներից և լեզուներից, կանգնած գահի և Գառան առաջ...»:

- *Ուշադրություն՝ Հովհաննեսը դատարկ երկինք չտեսավ:*

  Նա մարդկանց տեսավ:

  Տարբեր ազգերից:

  Տարբեր ժողովուրդներից:

  Տարբեր լեզուներից:

- *Երկինքը միայն այն վայր չէ, որտեղ մենք հանդիպելու ենք Հիսուսին: Այն նաև փրկված Աստծո ընտանիքի մեծ հանդիպման վայրն է:*

  «Արդյո՞ք մենք կճանաչենք իրար երկնքում»:

Հովհաննեսի նկարագրած երկինքը անանուն հոգիների մշուշոտ աշխարհ չէ: Նա տեսնում է մարդկանց, ազգեր, բազմություն և միասնական երկրպագություն:

Հովհաննեսն ասում է՝ ես ՏԵՍԱ երկինքը, ես ԼՍԵՑԻ երկինքը, և ես ՏԵՍԱ, թե ՈՎՔԵՐ էին երկնքում:

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ